

Ցաւակցական

- Մասնաճիւղիս երկար տարիներու համակիր եղբ. Յակոբ Սանտրունի Դեկտեմբեր 1, 2006ի, Ուրբաթ առաւօտուն յետ կարճատեւ հիւանդութեան մահացաւ իր տանը մէջ 90 տարու հասակին:

Հանգուցեալի դաղման արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, Դեկտեմբեր 3ին Ս. Էջմիածնի խորանի առաջ որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ Սիոն լեռան բարձունքին գտնուող Հայոց Ս. Փրկչեայ գերեզմանատունը:

Հանգուցեալի հոգւոյն հոգեսուրճը տրուեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի ակումբը:

Վարչութիւնս համակ մասնաճիւղի անուամբ կու գայ փոխանցելու իր ցաւակցական զգացումները հանգուցեալի ընտանեկան թէ սգակիր պարագաններուն որոնք են ու կը մնան Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքի հարազատները:

- Հինգշաբթի 27 Սեպտեմբեր 2006ին յետ կարճատեւ հիւանդութեան սրտի սուր տագնապի պատճառաւ, 62 տարեկան հասակին, մահացաւ միութեանս տարիներու անդամ եղբ. Յովսէփ Քէշիշեան (1924-2006):

Եղբոր դաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Ս. Էջմիածնոյ խորանի առաջ որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչեայ գերեզմանատան մէջ:

Եղբոր հոգւոյն յիշատակ սուրճ սպասարկուեցաւ մասնաճիւղիս սրահի մէջ որմէ անմիջապէս ետք հոգեճաշ:

Վարչութեանս ցաւակցութիւնները սգակիր պարագաններուն

- Սրտի խոր կսկիծով վարչութիւնս կու գայ գուժելու մահը Օր. Նուարդ Եագուպեանի, որը պատահեցաւ Երեքշաբթի, 12 Սեպտեմբեր 2006ին, յետ երկարատեւ հիւանդութեան: Քոյրը տարիներու նուիրաբերող անդամուհին եղած է շրջանիս Հայ Օգնութեան Միութեան, բայց ոչ պակաս նաեւ իր ծառայութեան վաստակը բերած էր Հ.Ս.Ը.Մ.ին, որուն համար խորապէս շնորհակալ կզգանք:

Հանգուցեալ քրոջ դաղման տխուր արարողութիւնը կատարուեցաւ Ս. Էջմիածնոյ խորանի առաջ ու մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչեայ գերեզմանատանը - Սիոն Լեռ, որմէ ետք հոգեսուրճ հրամցուեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի սրահին մէջ:

Հ.Ս.Ը.Մ.ի վարչութիւնը միացնելով իր ցաւակցական զգացումները Հ.Օ.Միութեան վարչութեան կու գայ խնդրելու մխիթարութիւն հանգուցեալի ընտանեկան պարագաններուն:

- Երկուշաբթի 27 Մարտ, 2006ի կէսօրին «Մաալէ Ատումիմ» յատուկ խնամքի հիւանդանոցի մէջ յետ երկարատեւ հիւանդութեան 78 տարեկան հասակին իր հոգին աւանդեց Տիկին Անժել Գարակէօզեան կողակիցը, այժմ

նաեւ հանգուցեալ, գաղութի բոլոր պարագաներուն քաջածանօթ, տարիներու Յ.Ե.Ս.ի ատենապետ, Տիար Յակոբ Գարակէօզեանի:

Ողբացեալի դաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի 28 Մարտ 2006ի յ. մ.ի ժամը 3:30ին Ս. Էջմիածնոյ խորանի առաջ, որմէ ետք բաւականին բազմամարդ յուղարկաւորութեամբ մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչեայ Հայոց գերեզմանատունը Սիոն Լեռ, որմէ ետք Յ.Ե.Ս.ի Թէքեան սրահի մէջ սպասարկուեցաւ հոգեսուրճը:

Յ.Ս.Ը.Ս.ի Վարչութեան թէ անդամնրու յատուկ ցաւակցութիւնները ողբացեալի սգակիր պարագաներուն:

Կարօն, Մուխթարը, Ոչ եւս է

• Բաւական երկար ատենէ ի վեր, Կարօն, «Մուխթարը», կը բացակայէր իր գործէն, յատկապէս կը դժուառանար բարձրանալու Պատրիարքարանի երկար սանթուխները մինչեւ Ս. Աթոռոյ դիւան ուր վերջին քսան տարիներու ընթացքին կը պաշտօնավարէր բացարձակ նուիրածութեամբ:

Հայոց «մուխթարը» իր առողջական վիճակի բերումով վերջին տարւոյ ընթացքին գրեթէ տունէն դուրս չէր տեսնուէր հակառակ որ ան իր ընկերային բնաւորութեամբ փնտրուած դէմք էր գաղութային ձեռնարկներու եւ հանդիսութեանց ամէնուրեք:

Վերջին անգամ Կարօն տեսնելու թէ վայելելու հաճոյքն ունեցան Ե.Հ.Բ.Ս.ի (Բարեսիրածի) ընտանիքի պարագաները երբ Կարօն եկած էր իր սիրելի անդամներու հետ բաժնելու Նոր Տարւոյ (13.1.06) աւանդական սեղանը:

Այդ սեղանը վերջինը եղաւ Կարօի երեւման, որմէ ետք Կարօի առողջութիւնը այնքանին վատթարացաւ որ կարօն վերձուեցաւ հիւանդանոց ուր քանի մը օրերու ցաւագին քաշքշուկէ ետք շիջեցաւ նաեւ Կարօի մոմը՝ Սրբոց Յակոբեանց տաճառի տարիներու անձնուրաց լուսարար Կարօի մոմը:

Ամբողջ տասնեակ տարիներ որեւէ Հայ հանգուցեալի մահազդի պատրաստութիւնը վերապահուած էր Կարօին եւ այդ այն կը կատարէր արանց դոյզն տրտունջքի եթէ իսկ կէս գիշերին ներկայանայիր այդ խնդրանքով:

Առդէօք ո՞վ էր պատրաստած ինքնին Կարօի մահազդը, որը Երեքշաբթի, Մարտ 20, 2006ին երեւաց վանքի մայր դարպասի ցուցատախտակի վերեւ:-

ՄԱՐԱԶԴ

ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ
1927-2006

Սիրելի մուխթարի դաղման արարողութիւնը որպէս Հայ քաղաքացի կատարուեցաւ Սրբոց Հրեշտակապետաց Սուրբ Խորանի առաջ, որուն ինք ծառայած էր ամբողջ 40 տարի թէ աւելի:

Կարօի դագաղը ուսմնաբարձ փոխադրուեցաւ Ս. Փռկչեայ գերեզմանատուն ու ամփոփուեցաւ հոն իր հեռացած պարագաներու քովընտին: Կարօի գերեզմանի վերել խօսք առաւ Ե.Հ.Բ.Ս.ի վարչական Պրն. Արամ Խաչատուրեան ու վեր հանեց Կարօի արժէքները որպէս ազգի թէ եկեղեցւոյ ծառայ ու հպարտ Սաղիմահայ:

Հ.Ս.Ը.Ս.ի Վարչութեան թէ անդամնրու յատուկ ցաւակցութիւնները ողբացեալի սգակիր պարագաներուն:

21 Յունուար 2006

• Մեր սիրելի եղբ. Անդոնի տան-հիւանդանոց աւելի քան երամեայ օրական երթ ու դարձը աւարտեցաւ: Անդոնը կարծես դարձած էր հիւանդանոցի աշխատակազմի անդամ, հոն, ուր իր հայրը յետ կաթուածի մը կը դարմանուէր երկարատեմէ ի վեր:

Ուրբաթ առաւօտեան, հիւանդանոցէ ստացուած հեռ ածայնը կ'երելի ըլլաու էր վերջինը դէպի հիւանդանոց վազքի:

Եղբ. Անդոնի հայրը, Յարութիւն Հինտոյեան, հոգին աւանդեց Ուրբաթ առաւօտ, 20.1.2006ին, 80 տարիքը ամբողջացուցած (1924-2006): Հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաները միութեանս բերած են իրենց լուրջ նպաստը որպէս



սկաուտ, մարզիկ թէ վարչական: Հանագուցեալը անձնապէս իր կեանքի դժուարութեանց բերումով ֆիզիքապէս բացակայ է եղած միութեանական սովորական աշխատանքէ բայց շատ առթիւ երբ միութիւնս դիմագրուած է ներգաղութային թէ միջ-միութեանական լարուածութիւններ, ինք միշտ յայտնաբերած է իր հաւատարմութեան թէ անսակարկ ծառայութեան տրամադրութիւնները, երբեմն ապշահար ձգելով նաեւ մեզ:

Հանգուցեալի թաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 21.1.2006ին, Ս. Էջմիածնի Խորանի առաջ ու մարմինը ամփոփուեցաւ Հայոց Ս. Փռկչեայ գերեզմանատունը, Սիոն Լերան վրայ: Յետ յուղարկաւորութեան Հ.Ս.Ը.Ս.ի սրահի մէջ տրուեցաւ հոգեսուրճը ապա հոգեճաշը:

Վարչութեանս սրտաբուխ ցաւակցութիւնները սգակիր պարագաներուն ու յատկապէս ընթացիկ վարչութեանս մէջ պաշտօնաւարող քոյր Ազնիւ Հինտոյեանին:

Յունուար 2, 2006

- Սաղիմահայ Տիկին Սարի Յակոբեան (ծնեալ Սարտիրոսեան), յետ կարճատեւ հիւանդութեան, մահացաւ 2 Յունուար 2006ին 82 տարու հասակին (1924-2006): Հանգուցեալի դաղման արարողութիւնը կատարուեցաւ Ս. Էջմիածնայ խորանի առաջ ու մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչեայ Հայոց զերեզմանատունը, Սիոն լերան վրայ:

Վարչութեանս ցաւակցութիւնները սգակիր պարագաներուն

Դեկտեմբեր 9, 2005

- Ցեղասպանութեան արիւնքը ճաշակած Եաֆայի գաղութի անդամ Տիկին Էսթեր Սազազեան մահացաւ այսօր 96 տարու հասակին (1910 - 2005): Հանգուցեալը հակառակ իր յառաջացած տարիքին անյազ ընթերցողն էր Հայերէն թերթին եւ սրտցաւ հետաքրքիրը Հայկական իրականութեան:

Տիկին Սազազեան մայրն էր մեր շատերուն ծանօթ Եաֆայի Ջաւենին: Նկատի առնելով որ Եաֆայի Հայոց Ս. Նիկողայոս Եկեղեցին ընդհանուր նորոգման տակ է, հանգուցեալի թաղման արարողութիւնը կատարուեցաւ հին Եաֆայի Լատինաց Ս. Պետրոս Եկեղեցւոյ խորանի առաջ եւ մարմինը ամփոփուեցաւ Եաֆայի Հայոց զերեզմանատան մէջ:

Վարչութեանս ցաւակցութիւնները

- Այսօր, Դեկտեմբեր 6, 2005ին, իր աչքերը յաւէտ փակեց Հայոց Ցեղասպանութեան նախօրէին, 1914ին Սարաշ` ծնած Տիկին Լուսինա Թիւթունճեան մայրը միութեանս երկարամեայ անդամ եղբ. Շիւքրիին: Հանգուցեալի թաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ ու մարմինը ամփոփուեցաւ Լատինաց զերեզմանատունը Սիոն Լերան վրայ:

Վարչութեանս ցաւակցութիւնները

- Նոյեմբեր 20, 2005ին միութեանս համակիր Սաղիմահայ Կարապետ Գրիգորեանի (1920 - 2005) թաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ: Հանգուցեալի մարմինը ամփոփուեցաւ Լատինաց Սիոն Լեռան զերեզմանատան մէջ:

Վարչութեանս ցաւակցութիւնները

- Երկարատեւ եւ տառապալից հիւանդութենէ ետք Նոյեմբեր 14ին Հատասա հիւանդանոցի մէջ իր աչքերը առջաւետ փակեց միութեանս համակիր անդամ Փանոս Տըլտըլեան իր 70 տարիքը հազիւ թեւակոխած (1936-2005):

Հանգուցեալը շրջանիս Հայ Կաթողիկէ Համայնքի երեւելիներէն էր: Գործօն մասնակցութիւն ունեցած էր իր համայնքի բոլոր ազգային թէ եկեղեցական գործերուն որպէս Արաքս ակումբի վարչական անդամ եւ թէ ամէն կիրակնորեայ պատարագի Սուրբ Խորանի վրայ ծառայող Սարկաւազ:

Հանգուցեալին վերջին անգամ առիթն ունեցանք Խորանի վերեւ տեսնելու Սեպտեմբեր 2005ին Հայ Կաթողիկէ Պատրիարք Յօր շրջանս այցի պահուն:



*Փանոս Տըլտըլեան
(1936-2005)*

Հանգուցեալի թաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Հայ Կաթողիկէ Յաւագին Տիրամօր եկեղեցւոյ մէջ, որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ Սիոն Լերան լանջին գտնուող Երուսաղէմի Լատին Համայնքի գերեզմանատունը:

Մասնաճիւղիս Վարչութեան թէ անդամներու սրտակսկիծ ցաւակցութիւնը ողբացեալի ընտանեկան թէ սգակիր պարագաներուն:

Սիրելի եղբայր Փանոս, հողը թեթեւ գայ վրադ:

Հանգուցեալ Փանոս Տըլտըլեանի մահուան տխուր առթիւ հետեւեալ անդամները փոխան ծաղկեպսակի Հ.Մ.Ը.Մ.ի կը փոխանցեն.-

Եղբ. Մարտո Նալպանտեան	100 ԻՆՇ
Եղբ. ճ որճ Կիւվլէքճեան	100 ԻՆՇ
Եղբ. Վիգէն Գրիգորեան	50 ԻՆՇ
Եղբ. Տիգրան Նալպանտեան	50 ԻՆՇ
Եղբ. Սերոբ Սահակեան	50 ԻՆՇ
Եղբ. Հրաչ Գրիգորեան	50 ԻՆՇ
Եղբ. Անդրեաս Հինտոյեան	50 ԻՆՇ
Եղբ. Յակոբ Սեւան	50 ԻՆՇ
Եղբ. Հրաչ Սեւան	50 ԻՆՇ
Եղբ. Պետիկ Կիրակոսեան	50 ԻՆՇ
Եղբ. Անդոն Նալպանտեան	50 ԻՆՇ
Եղբ. Յարութ Ասլանեան	50 ԻՆՇ
Եղբ. Արա Գասապեան	50 ԻՆՇ
Տիար Տիգրան Սահակեան	50 ԻՆՇ

- Շաբաթ, 12 Նոյեմբեր 2005ին, Ապու Տիսի ծերանոցի մէջ 94 տարու հասակին իր մահկանացուն կը կնքէ քոյր Արմէնուհին Ալէմեան (1909-2005): Հանգուցեալի թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ Հայոց Ս. Փրկիչ գերեզմանատունը Սիոն Լեռ:

Վարչութեան ցաւակցութիւնները

- Այսօր, 28 Հոկտեմբեր 2005ին, տեղի ունեցաւ Տիկ. Մարի Պօղօսեանի (Ծն. Թումայեան) դաղման տխուր արարողութիւնը Հրեշտակապետաց եկեղեցոյ մայր խորանի առաջ: Ողբացեալի մարմինը ամփոփուեցաւ Ս. Փռկչեայ գերեզմանատունը եւ հոգեսուրճը տրուեցաւ Ե.Հ.Բ.Մ.ի ակումբը: Տիկ. Մարի ծնեալ 1914ին բնիկ Երուսաղէմացի - Քաղաքացի մայրն էր Հ.Օ.Մ.ի անդամուհի Հռութ Նալպանտեանի եւ կէսուր մայրը Հ.Մ.Ը.Մ.ի գործոն անդամ Կարօ Յովսէփ Նալպանտեանի:

Վարչութեան ցաւակցութիւնները

- Շաբաթ, « Հոկտեմբեր 2005ի առաւօտեան, Ս. Յակոբայ եկեղեցոյ մէջ յաւարտ պատարագի տեղի ունեցաւ հոգեհանգստեան տարելիցի պաշտօնը հանգուցեալ Տիկին Արուսեակ Չաթալեանի: Հոգեսուրճը սպասարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սրահը:

Վարչութեան ցաւակցութիւնները

- Շաբաթ, 1 Հոկտեմբեր 2005ի առաւօտեան, Ս. Յակոբայ Մայր տաճարին մէջ, տեղի ունեցաւ քարասունքի հոգեհանգստեան պաշտօնը Տիկին Արագսի Էօրտէկեանի, որմէ ետք սուրճ սպասարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սրահին մէջ: Ողբացեալ քոյրը Հ.Օ.Մ.ի հոգեհանգստեան նուիրեալ անդամուհին էր:

Վարչութեան ցաւակցութիւնները

- Շաբաթ, 24 Սեպտեմբեր 2005ի առաւօտեան, Ս. Յակոբայ եկեղեցոյ մէջ պատարագի աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօնը Հայ Օգնութեան Միութեան վաստակաշատ անդամուհի Տիկին Վարդուհի Օհաննէսեանի մահուան տարելիցի:

Արարողութենէ ետք սգակիր պարագաները ուղղուեցան Ս. րկչեայ գերեզմանատուն ուր կը հանգչի ողբացեալ քոյրը իր ամուսնու դարձեալ նորոգ հանգուցեալ եղբ. Թագուր Օհաննէսեանի կողքին:

Օրուան տխուր առթիւ հոգեսուրճ սպասարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սրահը:

Ձոյգ ամուլը երկար տարիներու ծառայութեամբ թէ նիւթական անսահման նուիրածութեամբ կը գրաւեն իրենց արժանաւոր ու բացառիկ էջը Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի թէ Հ.Օ.Մ.ի պատմութեան գրքին մէջ:

Վարչութեան ցաւակցութիւնները